

ՀՏԴ 372.3

ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**ԾՆՈՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ**

Չարյան Ա. Ռ., Մովսիսյան Լ. Ա.

Լոգոպեդական աշխատանքի կազմակերպման, արդյունավետության և հաջող ելքերի մասին խոսելիս մշտապես կարևորվում է բազմամասնագիտական թիմի համալիր մոտեցման և, մասնավորապես, ընտանիքի դերի ու ծնողի ակտիվ մասնակցության մասին: Ծնողն է երեխայի ընդհանուր զարգացման և, մասնավորապես, խոսքի զարգացման ընթացքի մասին մեր թե՛ տեղեկատվության աղբյուրը, թե՛ զարգացման դինամիկան, թեկուզ սուբյեկտիվ, արձանագրողը և թե՛ մեր գործընկերը: Լոգոպեդական աշխատանքում խոսքի խանգարում ունեցող երեխայի ծնողի ներկայությունը, մասնակցությունը ենթադրում է հասկանալ երեխայի խնդիրը, գնահատել երեխայի հնարավորությունները, ճիշտ աջակցել երեխային, թույլ տալ, որ երեխան ինքնուրույն մտածի, խոսի, գործի, և, ամենակարևորը, ինչ պահանջներ ներկայացնի ու ինչ սպասելիքներ ունենա իր երեխայից:

Բանալի բառեր. շտկողական գործընթաց, խոսքի խանգարում, ծնող, ընտանիք, համագործակցություն, լոգոպեդական աշխատանք:

Լոգոպեդական աշխատանքը, պայմանավորված խոսքի խանգարման տեսակով, ենթադրում է խոսքի զարգացում, խոսքի խանգարումների հաղթահարում, խոսքի վերականգնում: Լոգոպեդական աշխատանքը ենթադրում է խոսքի հետազոտում, գնահատում, լոգոպեդական պարապմունքներ, մշտադիտարկումներ, աշխատանքի ավարտ (ելք): Լոգոպեդական աշխատանքում կարևորվում են նաև թղթավարությունը, համագործակցությունն այլ մասնագետների և լոգոպաթի ընտանիքի անդամների հետ, լոգոպեդական գիտելիքների տարածումը՝ իրազեկման և խոսքի խանգարումների կանխարգելման

նպատակով: Եվ այս ողջ գործընթացում իր կարևոր և նշանակալի դերն ունի երեխայի ընտանիքը՝ ծնողները: Քանի որ երեխայի խոսքի հետազոտման և խոսքային քարտի լրացման համար շատ կարևոր է ծնողի կողմից տրված ինֆորմացիան, շտկողական գործընթացում պարտադիր, անփոփոխ տարր է ծնողների և ընտանիքի բազմակողմանի մասնակցությունը:

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ ծնողի դերն անգնահատելի է երեխայի խոսքի զարգացման, խոսքային շփման, խոսքային ակտիվության ապահովման ու պահպանման գործում: Մանկավարժները երեխաների ցանկացած խմբի հետ աշխատելիս պետք է աշխատանքը կազմակերպեն և իրականացնեն այնպես, որ այդ շտկողական գործընթացում եղած յուրաքանչյուր անդամ լիովին և ամբողջապես ներգրավված լինի այդ գործընթացում, և այդ անդամներից կարևորվում են հատկապես ընտանիքն ու ծնողները: Շտկողական գործընթացի արդյունավետությունը և դրական փոփոխությունները հնարավոր են միայն համագործակցային մոտեցման պարագայում՝ լոգոպեդի, հոգեբանի, մանկավարժների և հատկապես ծնողների մասնակցության դեպքում [1, 2]:

Մեր ուսումնասիրության նպատակն է կարևորել ծնողի դերը որպես սեփական երեխայի խոսքի զարգացման կարևոր օղակ:

Մեր ուսումնասիրության համար որպես մեթոդ ընտրվել են գրույցի, դիտման և հարցաթերթիկային հարցման մեթոդները:

Եթե ծնողները չեն կարողանում ճիշտ գնահատել իրավիճակը և չեն կարևորում իրենց մասնակցությունն ու դերը ունենալ երեխաների շտկողական գործընթացում, ապա մասնագետը պետք է ուղղորդի ծնողներին, օգնի նրանց դառնալ շատ հետաքրքրված, ակտիվ և նախաձեռնող [2]: Միայն այս պարագայում հնարավոր է հասնել դրական արդյունքի: Յուրաքանչյուր ծնող ունակ է ներագդելու երեխայի և լոգոպեդի համատեղ աշխատանքի դրական ընթացքի վրա: Դա կախված է ծնողի վերաբերմունքից դեպի երեխան և երեխայի խնդիրը, իմացության և տեղեկացված լինելու մակարդակից, կյանքի փորձից, կյանքի սկզբունքներից, մանկավարժական հմտություններից [2]: Այդ իսկ պատճառով ծնողների հետ համագործակցությունը և աշխատանքը համարվում է շատ կարևոր կետ այս ամբողջ գործընթացում:


Մեր պրակտիկ փորձից ելնելով՝ կարող ենք նշել, որ ծնողն իրականում որոշիչ դեր ունի երեխայի խոսքի խանգարումը նկատելու, մասնագետին դիմելու որոշում ընդունելու, մի մասնագետի կողմից մեկ

այլ մասնագետի կամ մասնագետների մոտ ուղղորդելն ընդունելու, մասնագետի հետ համագործակցելու, տանը հանձնարարվող առաջադրանքները կատարելու և այլ հարցերում:

Դաստիարակությունը, ծնողի և երեխայի փոխհարաբերությունները մեծ նշանակություն ունեն խոսքի խանգարում ունեցող երեխաների համար: Մի շարք գործոններով է պայմանավորված, թե երեխան ինչպես իրեն կդրսևորի սոցիումում [4]: Այն ընտանիքում, որտեղ ապրում է խոսքի խանգարում ունեցող երեխա, ստեղծվում է սպեցիֆիկ մթնոլորտ: Այս երեխաների ծնողները շատ հաճախ լինում են թերաժեքության զգացումով, և իրենք իրենց անընդմեջ նույն հարցն են տալիս. «Ինչու՞ հենց իմ երեխան»: Եվ այս խոսակցություններն անպայմանորեն անդրադառնում են երեխայի վրա: Նաև լավ և ամուր հիմք չի ստեղծվում հետագայում շտկողական աշխատանքների համար, քանի որ երեխայի մոտ բացի խոսքում առկա խնդրից առաջ են գալիս մի շարք հոգեբանական բարդույթներ, թերաթեքության զգացում, խնդիրը հաղթահարելու անկարողություն:

Շատ հաճախ ընտանիքը չի կարողանում անհրաժեշտ օգնություն ցուցաբերել երեխային, ծնողներից շատերը չեն հասկանում երեխայի մոտ առկա գլխավոր խնդիրը և դրանից բխած երկրորդային խնդիրները: Չեն կարողանում ճիշտ ժամանակին, ճիշտ մասնագետի դիմել: Մեծ մասը կարծում է, որ երեխան ծույլ է, չի ուզում պարապել, կամակոր է: Հարագատների այսպիսի վերաբերմունքից երեխաների մոտ առաջանում են կոմպլեքսներ և նեգատիվիզմ, երեխայի խնդիրն ավելի է բարդանում, և հետագա աշխատանքները այլևս դյուրին չեն կարող համարվել [2, 3]: Եվ այս ամենի հետևանքներից խուսափելու համար կարևոր նախապայման է, որ լոգոպեդը բացատրի ծնողներին, թե որքան կարևոր է իրենց դերը խնդրի հաղթահարման համար: Հետագայում նաև պետք է հետևողական լինի, որպեսզի ծնողը անի հնարավոր ամեն բան երեխային աջակցելու համար: Ծնող-լոգոպեդ համագործակցությունը անընդհատ և փոխհամաձայնեցված գործընթաց է, որը պետք է իրականացվի ամեն օր, լինի երկկողմանի, յուրաքանչյուր կողմ պետք է լինի նախաձեռնող, հետևողական և պատրաստակամ միմյանց աջակցելու՝ ունենալով մեկ նպատակ՝ հաղթահարել երեխայի խոսքային խնդիրը: Եթե այս երկու կողմերից որևէ մի կողմը պատրաստ չէ համագործակցության, աջակցության, փոխըմբռնման, ապա կտրուկ կնվազի աշխատանքի արդյունավետությունը և կփոխվի ակնկալվող վերջնարդյունքի պատկերը:

Մեր կողմից գրույցի, դիտման մեթոդին զուգահեռ կիրառվել է նաև ուսունասիրություն, որը որոշակիորեն հստակեցրեց պատկերը և հաստատեց կամ ժխտեց տեսականորեն առաջադրած մի շարք կարծիքներ: Հետազոտությունը իրականացրել ենք հարցաթերթերի միջոցով, որոնք պարունակում են ինչպես փակ, այնպես էլ բաց հարցեր: Հետազոտությունը իրականացրել ենք լոգոպեդներին և խոսքի խանգարումներ ունեցող երեխաների ծնողների հետ: Հարցմանը մասնակցել են 10 ծնող և 10 լոգոպեդ: Ստորև բերված տրամագրում ներկայացված են ծնողների հետ իրականացված հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ հարցվածների 66,7%-ը պատասխանել է, որ լիովին մասնակցում է այդ գործընթացին, 16,7%-ը մասնակիորեն է մասնակցում, և 16,7%-ը կարծում է, որ գրեթե մասնակցություն չունի, պարզապես ուղեկցում է մասնագետի մոտ:




Տրամագիր 1. Երեխայի խոսքային խնդրի հաղթահարման գործընթացում ծնողների մասնակցությունը տոկոսային հարաբերությամբ:

Հարցվածների 33,3%-ը նշել է, որ ամբողջովին կատարում է լոգոպեդի կողմից տրված առաջադրանքները, իսկ 66,7%-ը նշել է՝ որոշ չափով: Բոլոր հարցվածները նշում են, որ իրենց մասնակցությունը շտկողական գործընթացին ամբողջովին բարձրացնում է դրա արդյունավետությունը:

Հարցվածների 75%-ը շտկողական գործընթացում հանդես է գալիս առաջարկություններով. նրանք նշում են, որ կարևոր է ծնողի դերը: Իսկ մնացած 25%-ը որևէ առաջարկությունով հանդես չի գալիս՝ նշելով, որ երեխայի խոսքային խնդրի հաղթահարման համար կարևոր նախապայման է միայն լավ մասնագետի ճիշտ աշխատանքը:


Հարցվածների 91,7%-ը նշել է, որ տարբերություն նկատում է տանը երեխայի հետ ծնողի աշխատելու պարագայում, 8,3%-ն էլ կարծում է, որ որևէ տարբերություն նկատելի չէ: Ծնողներն իրենց մասնակցությունը գնահատել են (5 բալանոց շտկողական աշխատանքում համակարգով).

25%-ը գնահատել է գերազանց, 25%-ը՝ լավ, 41,7%ը՝ անբավարար, 8,3%-ը գնահատել է 2 միավոր:



Տրամագիր 2. Լոգոպեդական աշխատանքում երեխաների մասնակցության գնահատումը տոկոսային հարաբերությամբ:

Շտկողական գործընթացին չմասնակցելը պայմանավորված է նրանով, որ ծնողների մեծ մասը՝ գրեթե 77,8%-ը, աշխատում է, ժամանակը չի ներում, 11,1%-ը լիովին վստահում է մասնագետին և իր մասնակցությունը չի կարևորում, 11,1%-ի մոտ առկա է այլ խնդիր:




Տրամագիր 3. Շտկողական գործընթացին չմասնակցելու պատճառները տոկոսային հարաբերությամբ:

Մասնագետների՝ լոգոպեդների 100%-ը կարծում է, որ մասնակիորեն են մասնակցում իրենց երեխայի խոսքի խանգարումների հաղթարման գործընթացին:

Հարցվածների 50%-ը նշում է, որ շտկողական գործընթացում ծնողները հանդես են գալիս առաջարկություններով, 50%-ն էլ նշում է հակառակը: Նշում են, որ այդ առաջարկները լինում են տարաբնույթ. ծնողները իրենց հնարավորությունների սահմաններում փորձում են լրացնել այն բացը, որը, օրինակ, չենք կարող լոգոպեդական սենյակում, կամ պարապմունքների ժամանակ չենք հասցնում իրականացնել:


Հարցված լոգոպեդների 25%-ը նշում է, որ երեխայի խոսքային խնդրի հաղթահարման համար կարևոր նախապայման է միայն իրենց ճիշտ աշխատանքը, 75%-ն էլ կարծում է, որ կարևոր նախապայման է ծնողի դերը:

Լոգոպեդների 75%-ը նշում է, որ ծնողներն իրենց կողմից տրված առաջադրանքները տանը կատարելու համար տրամադրում են 5-10 րոպե, 25%-ն էլ նշում է՝ 30-40 րոպե:



Տրամագիր 4. Լոգոպեդների կողմից տրված առաջադրանքների կատարման ժամանակահատվածը տոկոսային հարաբերությամբ:

Լոգոպեդների 100%-ը նշել է, որ տարբերություններ է նկատում երեխայի հետ տանը ծնողների աշխատելու և չաշխատելու պարագայում: Լոգոպեդները շտկողական աշխատանքում ծնողների մասնակցությունը 5 բալանոց համակարգով գնահատել են հետևյալ կերպ՝ 50%-ը նշել է 5 միավոր, 25%-ը նշել է 3, 25%-ը նշել է 2:



Տրամագիր 5. Շտկողական աշխատանքներում ծնողների մասնակցության գնահատումը լոգոպեդների կողմից տոկոսային հարաբերությամբ:

Մասնագետները նշում են հետևյալ առաջարկությունները, որոնք կարող են խթանել շտկողական աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը.

➤ Ծնողների իրազեկում, որի շրջանակներում ծնողները կտեղեկանան, կգիտակցեն ու կհասկանան, որ իրենք շատ կարևոր օղակ են իրենց երեխայի զարգացման գործում:

➤ Ծնողի պատասխանատվության բարձրացում, որի համաձայն, բացի երեխային կերակրելուց և հագցնելուց, ծնողը կարևոր դեր ունի երեխայի հետ ամենօրյա շփման ընթացքում մեծ ազդեցություն ունենալ երեխայի խոսքի զարգացման ընթացքի վրա՝ խաղալ տարբեր խաղեր երեխայի հետ, կազմել իրենց օրվա պլանը, պլանավորել երեխայի հետ իրենց գործողությունները, պատմել իրենց տեսածը, լսածը, զգացածը և այլն:

Այսպիսով, վերլուծելով ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք նշել, որ թե՛ մասնագետները և թե՛ իրենք՝ ծնողները, կարևորում են ծնողի դերը երեխաների խոսքային խնդրի հաղթահարման գործընթացում: Եվ ծնողների հետևողականությունն ու պատրաստակամությունը աշխատանքը դարձնում են էլ ավելի արդյունավետ և տալիս են դրական վերջնարդյունք: Լոգոպեդի աշխատանքն անարդյունավետ է առանց երեխայի ընտանիքի՝ ծնողի մասնակցության:

РОЛЬ И ВАЖНОСТЬ УЧАСТИЯ РОДИТЕЛЯ В ЛОГОПЕДИЧЕСКОЙ РАБОТЕ

Чарчян А. Р., Мовсисян Л. А.

В статье рассматривается вопрос об участии родителей в коррекционной работе с детьми с нарушениями речи в сотрудничестве с логопедами в дошкольных образовательных учреждениях, поскольку коррекционная работа не может быть полностью эффективной, если семья не участвует в процессе. Недостаточная осведомленность родителей о нарушениях речи и ее коррекционной работе, недооценка важности раннего выявления и своевременной деятельности, связанных с нарушениями речи, неправильные и порой вредные действия в отношении речи ребенка, свидетельствуют о необходимости сотрудничества на всех этапах коррекционной работы, обеспечения родительского образования в отношении возможностей развития речи у детей.

Ключевые слова: коррекционная работа, нарушение речи, родитель, семья, логопедическая работа.

THE ROLE AND IMPORTANCE OF PARENTAL INVOLVEMENT IN THE LOGOPEDIC WORK

Charchyan A. R., Movsisyan L. A.

The issue of the involvement of parents in the treatment of children with speech impediments in cooperation with speech therapists at pre-school education institutions is examined in this paper, as the correction of speech cannot be fully effective, if the family is not involved in the process. Parents' insufficient awareness on speech impediment and treatment, undervaluing the importance of speech impediments' early detection and timely actions, incorrect and sometimes harmful beliefs regarding child's speech, shows the necessity to cooperate at all the stages of treatment, provide parental education on the possibilities of children speech development. The children who have speech impediments, perception of their role and the evaluation of their involvement in the speech impediments correction, proves that, estrangement occurs when children, being in specialized twenty-four hour care pre-school groups and do not receive the necessary interaction and overall development stimulating activities with their parents.

Keywords: correcting action, speech disorder, parent, family, work of the speech therapist.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ա. Վ. և ուրիշներ Լոգոպեդիան գործնականում: Երևան: «Աստղիկ»: 2017: 76 էջ, էջ 16:
2. Коровашкина В. И. Практика работы с семьей, воспитывающей ребенка с особыми образовательными потребностями /В. И. Коровашкина// Логопед. 2018. № 4. С. 79-84.
3. https://students-library.com/library/read/54581-rol-semi-v-korrekcionno-razvivaussem-obucenii-i-vospitanii-rebenka-s-recevyminaruseniami?fbclid=IwAR1CFtrB5A5q8DtX2r2EzHuTQ_I1Ua5tlfZj4qY1VtRUGfpcbXoXLZ8ZN8E

Տեղեկություններ հեղինակների մասին

Չարչյան Ա. Ռ. - մանկավարժական գիտությունների թեկնածու

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. փոստ՝ charchyananna@gmail.com

Մովսիսյան Լ. Ա. - ուսանող

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. փոստ՝ lia98@mail.ru

Տրվել է խմբագրություն 14.10.2019